

Վագրիկ Բագիլը դասախոսություն կարդաց ԵՊՀ ուսանողների համար

Մեպտեմբերի 17-ին ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը հյուրընկալեց գերմանահայ PR մասնագետ, փիլիսոփայության գիտությունների դոկտոր Վագրիկ Բագիլին, ով հանդես եկավ դասախոսությամբ:

Դասախոսության ընթացքում դոկտոր Բագիլը բարձրացրեց այն հարցը, թե ինչ է իրենից ներկայացնում ճառագիր ասվածը, և քննարկվեցին հարցեր կապված մասնագիտական և անձնական ռեֆերենսների հետ: Բագիլին հետաքրքրեց նաև մասնակիցների կարծիքը այն հարցի շուրջ, թե ինչու է Եվրոպան այդքան գրավիչ Հայաստանի համար: Բարձրաձայնվեցին տարբեր պատճառներ և կարծիքներ: Դոկտոր Բագիլը խոսեց նաև արևմուտքի մշակույթի, արժեքների, և այլ խնդիրների մասին: Դասախոսության ընթացքում քննարկվեցին թեմաներ՝ կրոնից մինչև տարբեր փիլիսոփայական մտքերը: